ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 481

«21» օգոստոսի 2018թ. ք.էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկման առնելով էջմիածին քաղաքի Չարենց փողոցի թիվ 9/1 տան բնակիչ Ռոմա Ռուբենի Աստվածատուրյանի դիմումը պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 12082016-04-0010 տրված 12.08.2016թ. և «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /վկայական թիվ 096/ կողմից տրված չափագրությունը և եզրակացությունը/, էջմիածին քաղաքի Չարենց թաղամասի թիվ 9/1 հասցեում գտնվող փաստացի զբաղեցրած 134քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 214,6քմ /ներքին 175,4քմ, արտաքին 214,6քմ/ կառուցապատ մակերեսով բնակելի տունը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Չարենց թաղամասի թիվ 9/1 հասցեում գտնվող փաստացի զբաղեցրած 134քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 214,6քմ /ներքին 175,4քմ, արտաքին 214,6քմ/ կառուցապատ մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 214,6քմ մակերեսով բնակելի տան համար սահմանված 686720 /վեց հարյուր ութսունվեց հազար յոթ հարյուր քսան/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 482

«22» օգոստոսի 2018թ. ք.էջմիածին

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկման առնելով Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցի թիվ 50/2 շենքի թիվ 14 բնակարանի բնակիչ Արմեն Սուրենի Գալստյանի դիմումը պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 2366499 տրված 22.10.2009թ և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /վկայական թիվ 0244/ կողմից տրված չափագրությունը և եզրակացությունը/, էջմիածին քաղաքի Չարենց թաղամասի թիվ 229 հասցեում գտնվող 405քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված ընդհանուր՝ 297,9քմ /ներքին 246քմ, արտաքին 297,9քմ/ կառուցապատ մակերեսով բնակելի տունը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Չարենց թաղամասի թիվ 229 հասցեում գտնվող 405քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 297,9քմ /ներքին 246քմ, արտաքին 297,9քմ/ կառուցապատ մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված 297,9քմ մակերեսով բնակելի տան համար սահմանված 953280 /ինը հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր ութսուն/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք.էջմիածին Չարենց 1-ին թաղամաս թիվ 229:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 483

22 օգոստոսի 2018թ. ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԵԼԵՖՈՆԻ ԱԶԱՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկման առնելով էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի թիվ 83 տան բնակիչ Հովհաննես Բելեֆոնի Ազատյանի դիմումը պարզվել է, որ.

- - համաձայն 13.10.1993թ. տրված սեփականության վկայագրի, էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի թիվ 83 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Հովհաննես Բելեֆոնի Ազատյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 480քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 18քմ սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Անդրանիկ թաղամասի թիվ 83 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 18քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Հովհաննես Բելեֆոնի Ազատյանին /ծնված 21.03.1960թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Անդրանիկ 3-րդ թաղամաս թիվ 83:
3. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 484

24 օգոստոսի 2018թ. ք.Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԻՐԻ ՍԻՈՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկման առնելով էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 22ա տան բնակիչ Նաիրի Սիոնի Հարությունյանի դիմումը պարզվել է, որ.

- Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 13.04.2018թ. տրված թիվ 2249 և 2250 սեղանամատյաններով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերի, էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 22ա հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Նաիրի Սիոնի Հարությունյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասը կազմում է 285քմ, որից.
- օրինական հողամասը կազմում է 188քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- ավել օգտագործվում է 23քմ սահմանազատված հողամաս, որի վրա կառուցված են բնակելի նշանակության օժանդակ շինություններ, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը,
- ընդհանուր օգտագործման հողամաս 74քմ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Կամո փողոցի թիվ 22ա հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական և դրան կից ավել օգտագործվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասերի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 23քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Նաիրի Սիոնի Հարությունյանի /ծնված 17.09.1966թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Կամո փողոց թիվ 22/1:
3. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄԹԻՎ 485

24 օգոստոսի 2018թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 16.08.2012Թ. ԹԻՎ 391 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքապետի 16.08.2012թ. «Անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող հողամասը Սասնիկ Դերենիկի Ստեփանյանի սեփականությունը համարելու և ինքնակամ կառուցած շինությունները օրինականացնելու մասին» թիվ 391 որոշման մեջ կատարել փոփոխություն.

. Որոշման առաջին կետի «Էջմիածին քաղաքի Այվազովսկի փողոցի թիվ 2բ հասցեում գտնվող բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվող» բառերից հետո «248քմ մակերեսով» բառերը փոփոխել « 284քմ մակերեսով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 486

27 օգոստոսի 2018թ. ք.Էջմիածին

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի, Իսակովի փողոցի 2-րդ փակուղու թիվ 2 հասցեում գտնվող տունը սեփականության իրավունքով /վկայական N 08052018-04-0037 / պատկանում է Գրիգոր և Վարդան Սուպիկյաններին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով «Աստղիկ Մանուկյան » ԱՁ /վկայական թիվ 096/ կողմից հաստատված հատակագծերը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Իսակովի փողոցի 2-րդ փակուղու թիվ 2 հասցեում գտնվող տան զբաղեցրած հողամասի 356.0 քմ մակերեսով մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Իսակովի փողոց 2-րդ փակուղի թիվ 2, 216.0 քմ մակերեսով մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Իսակովի փողոց 2-րդ փակուղի թիվ 2/1 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 487

27 օգոստոս 2018թ. ք. Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Կարապետ Մելքոնյանին /համասեփ. Ն.Բաղումյան/ պատկանող 04-002-0874-0043, 04-002-0874-0052 և 04-002-0874-0063 ծածկագրերով հողամասերը շինություններով միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ ք. Էջմիածին, Շահումյան փողոց թիվ 75/7 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝